«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ՀԵՂԻՆԱԿ Նաիրա Սարգսյան

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ 4-րդ խումբ,տեխնոլոգիա

ՂԵԿԱՎԱՐ Կամո Բաղալյան

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 4

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ 4

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 4

2. Գրական ակնարկ 5

Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ԾՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 6

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂԻ ԿԱՄ ՆՐԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ 9

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԵՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 12

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 13

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16

5. ԱՄՓՈՓՈՒՄ 17

6 .ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Սովորական ուսուցիչը պատմում է: Լավ ուսուցիչը բացատրում է: Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս: Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է» : Ուիլյամ Ուորդ

« Ինչու՞ ես ատեմ երեխային այսօրվա վատի համար, ես նրան կսիրեմ այն լավի համար, ինչը նրա մեջ դաստիարակելու եմ վաղը»: Վ. Ա. Սուխոմլինսկի

Դեռևս հին ժամանակներից երեխաների դաստիրակության գործում առաջնությունը տրվում էր ուսուցիչներին՝ անտեսելով սովորողի ընտանեկան կրթական միջավայրի առանձնահատկությունները: Այժմ, երբ երեխայի հետ փոխգործակցության օպտիմալ մոդելը ուղղված է անձին, ուսումնական հաստատությունում կրթական ծրագրերը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով սովորողի անհատակունությունը: Իսկ ինչպես հայտնի է անհատականությունը ձևավորվում է ընտանիքում, քանի որ երեխան իր ժամանակի մեծ մասն անցկացնում է ընտանիքում և նրա զարգացման վրա մեծ ազդեցություն ունի ընտանեկան միջավայրը: Շատ հաճախ կարելի է կարծիք լսել, որ ամեն ինչ ընտանիքից է գալիս: Սա իսկապես այդպես է: Հիմնական բնավորության գծերը կա՛մ գենետիկորեն դրված են, կա՛մ ձևավորվում են ծնողների ազդեցության տակ մանկության տարիներին: Բայց դա չի նվազեցնում դպրոցի դերը անհատի ձևավորման և դաստիարակության գործում: Այն սերմերը, որոնք ցանվել են ծնողների կողմից, կարող են հավասարապես սատկել կամ բողբոջել դպրոցական միջավայրում՝ դասարանի թիմի ,ուսուցիչների և դասղեկի 3 ազդեցության տակ: Այդ իսկ պատճառով պետք է իրականացնել համագործակցություն ուսուցչի , սովորողի ընտանիքի հետ: Եվ այդ համագործակցությունը գնալով դառնում է ավելի արդիական և պահանջված: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը իրենից ներկայացնում է նպատակաուղղված և երկարատև աշխատանք, որն էլ իր հերթին ենթադրում է գործողությունների մի ամբողջական համակարգ՝ ուղղված սովորողի կրթական կարիքների ու պահանջմունքների վերլուծությանն ու բարելավմանը: Ուսուցչի և սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ համագործակցությունը պետք է իրականացվի ՝ հաշվի առնելով բարձր մարդկային որակները, էթիկայի նորմերը: Եվ ինչպես ասել է ռուս մեծ ուսուցիչ Սուխոմլինսկին. «Ընտանիքում արմատներ են գցվում, որոնցից հետո աճում են ճյուղեր, ծաղիկներ և պտուղներ:

Դպրոցի մանկավարժական իմաստությունը կառուցված է ընտանիքի բարոյական առողջության վրա»:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հետազոտության արդիականությունը կայանում է նրանում, որ կյանքի այս փուլում անհրաժեշտ է աշակերտի ուսման մեջ հաստատուն կապ ստեղծել ծնողի և ուսուցչի միջև: Դա կփոխի ուսման որակը դեպի լավը: Մեծաթիվ դասարաններում հնարավոր չէ ուշադրություն դարձնել բոլոր աշակերտներին, հատկացնել բավարար ուշադրություն, և հենց այդ պատճառով անհրաժեշտ է ուսուցիչ-ծնող համագործակցությունը, որպեսզի ավելացնեն դրականը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- Կապ ստեղծել ուսուցչի և ծնողի միջև:
- Նշել, թե ինչով է օգուտ ծնող-ուսուցիչ համագործակցությունը աշակետին,ծնողին,ուսուցչին,դպրոցին:
- Անել այնպես, որ ծնողը մասնակցի ուսուցման գործընթացին, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպմանը, արտադասրանական աշխատանքներին:
- Ապահովել լավ պայմաններ աշակերտի սոցիալական զարգացման, կրթության և դաստիարակության համար:
- Ցույց տալ ուսուցչի և ծնողի լավ համագործակցությունը աշակերտի ուսուցման գործընթացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ինչպես ներգրավել ծնողներին միջին դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացներին:

• Ինչպես ներգրավել ծնողներին երեխաների ուսմանը վերաբերող որոշումների կայացմանը:

2. Գրական ակնարկ

Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Սակայն, ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը: Իրականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»: «Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը:

«Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

• Ծնողները կարևոր դեր են խաղում երեխայի ուսման գործընթացում.

• Ծնողները մասնակցում են դպրոցի կազմակերպած միջոցառումներին.

• Ծնողները զավակների ուսման գործընթացում ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում են երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը «Ծնողների ներգրավվածությունը» ծնողների համար կարող է նախատեսել.

• Դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն.

• Երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում ծնողի կողմից.

• Դպրոցի համար ռեալ պահանջների նախանշում.

• Ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և իրենց երեխաների առաջընթացի քննարկում. • Տնային առաջադրանք կատարելիս աշակերտին օգնության ցուցաբերում.

• Տնօրենների և ուսուցիչների համար ծնողի ներգրավումը դպրոցական կյանքում նշանակում է.

• Ծնողներին իրենց երեխաների առաջընթացի մասին համապատասխան տեղեկատվությամբ ապահովում.

• Ծնողների համար տեղեկատվության հաղորդում դպրոցի միջոցառումների մասին.

• Պարբերաբար հանդիպումների կազմակերպում աշակերտների առաջընթացի քննարկման նպատակով. Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: Այս փաստաթղթում «ծնող» տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար:

ԾՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում.

Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աձի և հնարավորությունների նկատմամբ հավատ: Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա: Ստորև քննարկում ենք յուրաքանչյուր խմբի օգուտը. Օգուտ աշակերտին Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում,, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպասին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

• Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի. Ծնողների հետ համատեղ ընթերցանությունը երեխայի մեջ կարթնացնի սեր գրքի

• Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է.

• Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն.

• Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.

• Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.

• Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը. Օգուտ ծնողին Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները: Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը.

• Ավելի է հասկանում սեփական երեխային.

• Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին.

• Դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ որդու հանդեպ և ավելի շատ է գնահատում որդու ձեռքբերումները.

• Դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին.

• Ավելի ինքնավսատահ է որոշումներ կայացնելիս.

• Ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն/հմտությունների բարձրացմանը.

• Ավելի առաջադիմորեն է օգտագործում այկևայլ հնարավորությունները սեփական ընտանիքի և որդու կարիքների բավարարման հմար.

• Երեխային տալիս է հնարավորություն, ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնխնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ:

• Ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմնխնդիրները լուծելու նպատակով: 6

Օգուտ ուսուցչին Ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն:

• Ուսուցչի մոտ հանդես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ.

• Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից. Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա: Օգուտ դպրոցին Ծնողների ներգրավվածությունը դրականորեն է ազդում ընդհանրապես դպրոցի վրա ևս.

• Դպրոցը ծնողների կողմից ավելի աջակցում ունի.

• Աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ.

• Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել.

• Այն դպրոցում, որտեղ աշակերտների հաճախումը ճատ ցածր է, ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի:

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂԻ ԿԱՄ ՆՐԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ՝ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Ընտանիքը ունի շատ առանձնահատկություններ: Այն միավորված է թե՛ ընդհանուր նպատակով, թե՛ ազգակցական: Ծնողի սերը կարող է արագացնել անձի զարգացումը: Այստեղ կա կայուն հաղորդակցում, տարբեր տարածքներում, տարբեր գործողություններում:

Ընտանիքն է ապահովում անձի կարևոր գծերի դաստիարակությունը։ Այստեղ աշակերտը առաջին անգամ պատկերացնում է աշխարհը, հասկացություններ, հայացնքեր, զգացմունքները են ձևավորվում նրա մեջ։

Ընտանիքը ապահովում է երեխայի առողջ կազմակերպումը, օգնում է յուրացնել ավագ սերունդների կյանքի ու աշխատանքի դրական փորձը, կուտակել գործունեության, սովորությունների, հարաբերությունների արժեքավոր անհատական փորձ։

Ծնողների հետ համագործակցությունը դպրոցի և ուսուցչի ամենակարևոր խնդիրն է։

Ընտանիքները շատ տարբեր են, յուրաքանչյուրն ունի իր խնդիրներն ու դժվարությունները,ուստի հնարավոր չէ պատրաստի և միակ ճիշտ պատասպխանը տալ այն հարցին, թե ինչպես շփվել ընտանիքի հետ: /Վ.Դ.Սեմյոնով/

Ուսուցչից է կախված գրեթե ամեն ինչ, նա պետք է կարողանա հմտորեն վերլուծել հանգամանքները և ճիշտ որոշում կայացնել որոշակի իրավիճակում։

Ծնող- ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը , ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը:

Երկկողմանի համագործակցությունը կապահովի այնպիսի կրթական միջավայր, որտեղ աշակետը կզգա իրեն ապահով և պաշտպանված։ Ծնող-ուսուցիչ համագործակցությունը դրական կազդի աշակերտի առաջադիմության, արժեհամակարգի ձևավորմանն հաջողություններ ունենալու վրա։ Ծնողների և ընտանիքների ներգրավումը իրենց երեխաների կրթության գործում արժեքավոր ներդրում է յուրաքանչյուր ծրագրի համար։

Որպեսզի երեխայի կրթությունը իմաստալից դառնա , ուսուցիչը պետք է՝

- ծնողներին դիտի որպես գործընկեր
- մշտապես հաղորդակցվի նրանց հետ
- հրավիրի ծնողներին մասնակցելու ծրագրին

• աջակցի ծնողներին՝ տանը ուսմանը նպաստելու նպատակով

• աջակցի ծնողներին ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու դեպքում: /<<Քայլ առ քայլ>>-ի չափորոշիչների կիրառումը դասարաններում/

Այսպիսով աշակերտը միշտ կլինի ուշադրության կենտոնում, կլինի կառավարելի և եթե լինեն խնդիրներ հեշտությամբ կլուծի այդ խնդիրները: Ուսուցիչը ,համագործակցելով ծնողի հետ, կարող է օգնել աշակերտին կոնֆլիկտների դեպքում:

Հետազոտություններից պարզ դարձավ, որ աշակերտները ավելի լավ են դպրոցում, երբ նրանց ծնողը ներգրավված է ուսման ընթացքին:

<<Ծնողների ներգրավվածություն>> տերմինը նշանակում է միասնական և անընմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սա համախմբում է ուսուցչին և ծնողին, որպեսզի նրանք նպաստեն աշակերտի առաջադիմությանը: Երբ ծնողը ներգրավված է աշակերտի ուսման գործընթացում, աշակերտի ավելի առաջադեմ է, լավանում է նրա հաճախման ցուցանիշը, նրա մոտ զարգանում են սոցիալական կարևոր հմտություններ, ունենում է լավ վարքը թե՛ տանը, թե՛ դպրոցում: Սրանք ազդում են ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Ծնողները տեղեկանում են երեխաների կրթական կարիքների մասին և խրախուսում են ներգրավվելը:

Ծնող-ուսուցիչ կապը ավելի ամուր կլինի, եթե հաախ հավիրվեն ծնողական ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ, տարբեր հետաքրքիր միջոցառումներ:

Եթե օգտագործենք ժամանակակից տեխնոլոգիաները, օրինակ համակարգիչ, կարելի է քննարկումները իրականացնել հեռավար: Տեխնոլոգիաները հնարավոր կդարձնեն երեխաների կրթական կարիքների մասին տեղեկանալ ավելի շուտ:

Ժամանակակից տեխնոլոգիաները օգտագործելով ուսուցիչը կարող է աշակերտի առաջադիմության մասին շաբաթական կամ ամսական հաշվետվություն ուղարկել ծնողին: Այս ձևը ծնողին կտա շոշոափելի վկայություն իր երեխայի գիտական առաջընթացի մասին:

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԵՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Լավն է այն դասարանը, որի դասղեկը հաճախ է հրավիրում ծնողական ժողով, ներկայացնում աշակերտների առաադիմությունը, քննարկում դասարանում առկա ցանկացած խնդիր: Ծնողական ժողովը կապում է ուսուցչին և ծնողին, ընտանիքին մոտեցնում է դպրոցին, օգնում որոշել երեխայի կրթության վրա ազդելու ամենաօպտիմալ ուղիները: Ժողովների ժամանակ ծնողները ծանոթանում են ընտանիքում և դպրոցում երեխաներին դաստիարակելու խնդիրներին, ձևերին և մեթոդներին:

Երբեմն ուսուցչի կամ ծնողի ոչ ճիշտ խոսքը կամ վաքը կարող են առաջացնել կոնֆլիկտային իրավիճակ, որն ավելի դժվար կդարձնի ծնող-երեխա-ուսուցիչ-դպրոց համագործակցությունը: Դրանից խուսափելու համար պետք է ճիշտ ծնողական ժողով վարել, կառուցողական մթնոլորտ ստեղծել, որի արդյունքում կշահի թե՛ սովորողը, թե՛ վաղվա քաղաքացին: Ծնողական ժողովը պետք է կազմակերպել, հետևելով մի քանի սկզբունքների, դրանք են.

- Ժողովի ժամանակ որոշել կարևոր խնդիր, որը վերաբերի դասարանի աշակերտներին և ըստ դրա կառուցել զրույցը ծնողների հետ:
- Սեղանները և աթոռները դասավորել շրջանաձև, որպեսզի բոլորը տեսնեն և լսեն միմյանց:
- Ժողովի ընթացքում իրականացնել խաղեր և խմբային ձևեր:
- Խնդրահարույց հարցերի քննարկման ժամանակ հենվել առավել շատ փորձ ունեցող ծնողների կյանքի, մանկավարժական փորձի, դպրոցի խորհրդի կարծիքների վրա:/Կ. Դ. Ուշինսկի/

Ծնողական ժողովի ժամանակ ուսուցիչը պետք է ցուցաբերի հետևյալ վարքագիծը.

- Չունենալ լարվածություն և տագնապ ծնողների մոտ:
- Դրսևորել հարգանք նրանց նկատմամբ խոսքի, ժեստերի միջոցով:
- Փորձել հասկանալ ծնողներին, ճիշտ որոշել խնդիրները:

• Ծնողների հետ լինել բարեհամբույր և հանգիստ: Բոլոր ծոնղները պետք է գնան հավատով լցված դեպի իրենց երեխան:

Եվ վերջապես ուսուցչի վարպետությունը կայանում է աշակերտների հետ փոխազդեցության կազմակերպման ձևերը, վերլուծելու կարողությունը, համոզմունքների արտահայտումը, առանց վիրավորելու աշակերտի տեսակետը, աշակերտի ներշնչման կարողությունը: Ուսուցչի մոտեցումից շատ բան է կախված: Ուսուցիչն է, որ կարող է ճիշտ ղեկավարելով աշակերտներին և ծնողներին , կկարողանա նրանց մեջ ձևավորել բարձր արժանիքներ, զարգացնել հետաքրքրությունը ուսման նկատմամբ:/Կ. Դ. Ուշինսկի/

Ինչպես ասել է Սուխումլինսկին «Յուրաքանչյուր երեխայի մեջ կա լավը, և դաստիարակության գործընթացը պետք է կառուցել դրականի վրա հենվելու սկզբունքի հիման վրա»:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Իմ տարիների աշխատանքային փորձը ցույց է տվել, որ տարրական դասարաններում ծնողները ավելի ներգրավված են դասապրոցեսին: Հաճախ են գալիս դպրոց, ուսուցիչ-ծնող կապը ամուր է: Միջին դպրոցում ներգրավվածությունը ավելացնելու համար Ճամբարակի N2 հիմնական դպրոցը մշակեց հատուկ ռազմավարություն, որը ծնողին կապեց դպրոցի հետ:

Ուսուցիչը առաջարկեց միջին դպրոցի դասղեկներին կազմակերպել տարատեսակ բնույթի միջոցառումներ ծնողների և սովորողների մասնակցությամբ: Նրանց մասնակցությամբ կազմակերպվեցին ցուցահանդեսներ, արշավներ և այլ միջոցառումներ:

4-րդ դասրանում շատ հաճելի թեմա էր՝ <<Հայկական ազգային տարազը>>: Ծնողների հետ միասին երեխաները փորձել են կարել հայկական տարազներ և կրել իրենց տարազները: Պահպանվել են հայկական բոլոր նախշերը: Վերջում երեխաները կրում էին իրենց իսկ կարած տարազները, դրանով իսկ ցույց տալով, որ ազգայինը սկսվում է տարազից: Իսկ տարազը խորհրդանշում է մի ողջ ազգի պատմություն:

5-րդ դասարանի աշակերտները կազմակերպեցին աշնանային շուկա։ Նրանց հանձնարարվել էր նկարել աշնանային շուկա։ Համագործակցելով ծնողների հետ կարողացանք կազմակերպել ցուցահանդես, որի ընթացքում ցուցադրվեցին երեխաների նկարները։ Ծնողները երեխաներին ոգևորել են և աջակցել ցուցահանդեսն իրականացնելիս։ Վերջում նաև կատարվեց գնահատում ծնողների կողմից, նրանք արտահայտեցին իրենց կարծիքը ցանկացած նկարի մասին։ Ծնողները նաև բերել էին մրգեր , տերևներ, բանջարեղեններ աշնանային շուկան ավելի գունեղ դարձնելու համար։

6-րդ դասարանում կատարեցինք երկրաչափական մարմինների պրոյեկտում։ Երեխաները ծնողների օգնությամբ կատարեցին երկրաչափական մարմինների գծագրում և պատրաստում։ Ծնողների հետ միասին իրականացրինք բաց դաս , որտեղ ցուցադրվեցին երեխաների պատրաստած պատկերները։ Բաց դասին ներկա էր նաև մաթեմատիկայի ուսուցչուհին, ով ևս ողջունեց երկրաչափական մարմինների պատրաստումը, և խոսատացավ օգտագործել դրանք իրենց դասին։ Վերջում կատարվեց գնահատում և կարծիքների փոխանակում։

7-րդ դասարանում ունեինք երաժշտական թեմա։ Ընտրվել էր Կոմիտասի «Հով արեք» ստեղծագործությունը։ Ծնողների հետ միասին իրականացրինք բաց դաս դրսում։ Ծնողները աջակցեցին երեխաներին նյութերով, անհրաժեշտ սարքավորումներով և իրենց ներկայությամբ։ Երեխաները ներկայացրին Կոմիտասի կյանքը, ստեղծագործությունները։ Քանի որ թեման «Հով արեք» ստեղծագործությունն էր, լսեցինք այս ստեղծագործության շատ տարբերակներ և վերլուծեցինք, թե որը ինչքանով է համապատասխանում բնօրինակին։ Վերջում երեխաները փորձեցին ծնողների հետ կատարել այն։

Այդ մի քանի ամիսների ընթացքում դպրոցում տիրում էր ոգևորություն, խանդավառություն, բոլորը շտապում էին իրենց հանձանարարականները կատարել։ Նշեմ նաև, որ սկզբում ծնողները կաշկանդված էին, բայց հաղթահարեցին այդ կաշկանդվածությունը, սկսեցին մեծ ոգևորությամբ և առանց կաշկանդվելու ներկայացնել այն, ինչ իրենց հանձնարարված էր։ Ուզում եմ ծնողների արտահայտած մտքերից մի քանիսը մեջբերում անել.

«Շատ նոր գիտելիքներ, հմտություններ սովորեցինք»:

«Շփման արդյունքում ավելի լավ ճանաչեցինք դասղեկին, ավելի շատ տեղեկացանք նրա և դպրոցի պահանջների մասին»:

«Ճանաչեցինք մեր երեխաներին նորովի» :

«Ծնողներս նաև իրար հետ շփման արդյունքում ավելի լավ ճանաչեցինք միմյանց»:

«Երգելիս, պարելիս, նկարելիս մտովի տեղափոխվեցինք մանկություն»:

«Կուզենայինք այս ծրագիրը շարունակական լիներ»:

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այպիսով, ելնելով մեր դպրոցի իրականացրած ծնող-դպրոց համագործակցությունից, վերանայելով արդյունքները , կատարեցինք դիտարկումներ, որոնք կներկայցնենք ստորև : Համգործակցությունը հաջողված էր և դրական ազդեցություն ունեցավ սովորողների անհատականության և կրթական ուսումնառության վրա: .Ուսուցչի, սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է: Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում կրթության առաջնային շահերի՝ սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է: .Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա: Այստեղ չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթները: . Հարկավոր է հաճախակի ծնողական ժողովներ իրականացնել, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել կրթական հնարավոր խնդիրներն ու սովորողների՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքային շեղումներն ու գտնել միասնական լուծման տարբերակներ: . Հարկավոր է մյուս սովորողների ծնողների մեջ ևս ստեղծել բարոյահոգեբանական կայուն ու առողջ միջավայր, որպեսզի հնարավոր լինի խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից: .Կարևոր հանգամանք է նաև մանկավարժական խորհրդատվությունը ծնողին: Ուսուցիչն իր նեղ մասնագիտական գիտելիքներով ու փորձառությամբ ցանակալի է, որ կիսվի ծնողների հետ: Կարևոր պայման է փոխադարձ հարգանքն ու այն գիտակցումը, որ կողմերի արդյունավետ աշխատանքն ուղիղ համեմատական է արժեքային համակարգ ունեցող, դաստիարակված ու գիտակից անձնավորության ձևավորմանը: . Մենք պետք է փորձենք ծնողներին վստահություն տալ, որ որակյալ ուսուցիչները կսովորեցնեն և կկրթեն իրենց որդուն կամ դստերը, և որ դրա համար պատրաստ են բոլոր անհրաժեշտ պայմանները:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

«Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև»: Ուրեմն կարողանանք ձևավորել կյանքի լայն իմացություն և տաղանդ, կարողանանք ճիշտ դաստիարակության միջոցով դաստիարակել ու կերտել երկրի, ինչու չէ , նաև աշխարհի ապագա պատմությունը: Ա. Ս. ՄակարենկոՈւսուցիչները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում: Ծնողները բացառիկ դեր են խաղում երեխայի կյանքում. նրանք են կրում դրա զարգացման հիմնական պատասխանատվությունը: Ընտանիքը պետք է լինի համախոհների խումբ և գործի դպրոցի հետ համատեղ: Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն և՛ ուսուցիչների, և՛ ծնողների համար, ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց – ընտանիք համագործակցությունը:

6 .ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Կ.Դ .Ուշինսկի

2. «Քայլ առ քայլ»-ի չափորոշիչների կիրառումը դասարանում

3. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf

4. Նախաշավիղ 1 .2012

5. Վ. Դ. Սեմյոնով /Փոխազդեցություն դպրոցի և սոցիալակն միջավայրի միջև

6. Վ.Դ. Սեմյոնով/ Մանկավարժություն